

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2017 թվականին ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման>> վիճակագրական ժողովածուն ընդգրկում է հանրապետության 2017թ. արտաքին առևտրի վերաբերյալ տվյալները: Ժողովածուի նյութերի հիմքում ընկած են ՀՀ մաքսային վիճակագրության և վիճակագրական դիտարկումների արդյունքում ստացված տվյալները (ներառված չեն քաղաքացիների կողմից ուղևորությունների ժամանակ կազմակերպված առևտրի տվյալները): Նկատի ունենալով այն, որ <<Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը և դրանց մասերը>> ապրանքային խմբի գծով արտաքին առևտրում մեծ տեսակարար կշիռ ունեն ֆիզիկական անձանց կողմից իրականացված առևտրի ծավալները, ժողովածուի վերջում բերված հավելված 1-ում ներկայացվում է նշված ապրանքախմբի (բոլոր ապրանքային ենթախմբերով) արտաքին առևտրի ամբողջական պատկերը՝ ներառյալ ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի ծավալները:

Ժողովածուի մեջ բերված են արտահանման և ներմուծման ծավալները բնաիրային և արժեքային արտահայտությամբ՝ ըստ <<ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի>> (ԵԱՏՄ ԱՏԳԱԱ), հետևյալ հաջորդականությամբ.

- ապրանքային բաժին (I-XXI),
- ապրանքային խումբ (2-նիշ ծածկագիր),
- ապրանքային ենթախումբ (4-նիշ ծածկագիր),
- ապրանք (10-նիշ ծածկագիր):

Արտահանման ծավալներում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները, իսկ ներմուծման ծավալներում՝ արտասահմանյան արտադրության ապրանքները, որոնք ներկրվել են հանրապետություն՝ սպառման և վերաարտահանման համար:

Արտահանման և ներմուծման ծավալներում ընդգրկված չեն շրջանառության մեջ գտնվող արժեթղթերը, թղթադրամները և մետաղադրամները, դրամական ոսկին, հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումները, ցուցահանդեսների և տոնավաճառների համար ուղարկված կամ ներկրված ապրանքները:

Արտահանման ծավալները հաշվարկված են ՖՕԲ գներով, իսկ ներմուծմանը՝ ՄԻՖ-ով (ներառյալ ապահովագրությունը և տրանսպորտային ծախսերը՝ մինչև ներմուծող երկրի տնտեսական տարածք):

Արտահանման և ներմուծման արժեքային ցուցանիշների հաշվարկի համար ազգային դրամի վերահաշվարկումը ԱՄՆ դոլարի, կատարվել է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ամենօրյա պաշտոնական փոխարժեքի:

Ապրանքների արտահանման և ներմուծման հաշվառումը կատարվել է համաձայն ԵԱՏՄ ԱՏԳԱԱ դասակարգչի, որը մշակված է ապրանքների նկարագրման և կոդավորման ներդաշնակեցված համակարգի (HS) հիման վրա:

Արտահանման և ներմուծման ծավալների բացակայության դեպքում օգտագործվել է <<->> նշանը, իսկ շատ փոքր ծավալների դեպքում՝ է 0.0 նիշը: